ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/312/2024

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 22 հոկտեմբերի 2024թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2024 թվականի հոկտեմբերի 22-ին, քննելով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Կարեն Ալեքսանի Անդրոյանի կողմից «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/312/2024 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, Էլեկտրոնային հայտարարագրերի ռեեստրի տվյալների ուսումնասիրության արդյունքներով, պարզել է, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Կարեն Ալեքսանի Անդրոյանի 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և

ծախսերի հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) հանձնված և հրապարակված հայտարարագրերի ցանկում առկա չէ:

1.2 «Հանրային ծառայության մասին» օրենքի 35-րդ հոդվածով սահմանված կարգով ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից ներկայացված հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրի տվյալների համաձայն՝ Կարեն Ալեքսանի Անդրոյանը հանդիսանում է 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող պաշտոնատար անձ:

1.3 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի ապրիլի 18-ի թիվ 01/1255/432-2024 գրությամբ Կարեն Ալեքսանի Անդրոյանին ծանուցում է ուղարկվել Հայտարարագիրը չներկայացնելու վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում հայտարարագրման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով ներկայացնել Հայտարարագիրը: Նույն ծանուցմամբ հայտնվել է, որ նշված ժամկետի ընթացքում Հայտարարագիրը չներկայացնելու դեպքում վերջինս նշված ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը, ժամը՝ 12:15-ին հրավիրվում է Հանձնաժողով՝ իր մասնակցությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու համար: Նշված ծանուցումը Կարեն Ալեքսանի Անդրոյանի կողմից ստացվել է 2024 թվականի մայիսի 6-ին: Սակայն, ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Հայտարարագիրը չի ներկայացվել:

1.4 2024 թվականի հունիսի 6-ին պատշաճ ծանուցված Կարեն Ալեքսանի Անդրոյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ/273/24 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.5 Հանձնաժողովի կողմից 2024 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 01/3237-2024 գրությամբ Կարեն Ալեքսանի Անդրոյանին է ուղարկվել 2024 թվականի հոկտեմբերի 22-ին՝ ժամը՝ 14:15-ին նշանակված, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու մասին ծանուցագիր:

1.6 Սույն վարույթի շրջանակներում 2024 թվականի հոկտեմբերի 18-ին Կարեն Ալեքսանի Անդրոյանի կողմից Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային հասցեին են ուղարկվել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 28-ի Կարեն Անդրոյանին պաշտոնից ազատելու և խորհրդականի՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողի պաշտոնում նշանակելու մասին թիվ Կ 286-Ա և 2021 թվականի սեպտեմբերի 29-ի Կարեն Անդրոյանին աշխատանքից ազատելու մասին թիվ Կ 516-Ա հրամանները (այսուհետ միասին՝ Իրավական ակտեր)՝ միաժամանակ, վերջինս հայտնել է, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում

առանձին գործառույթներ համակարգողը չի հանդիսանում հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ: Ուստի, վերոնշյալը հաշվի առնելով և հիմք ընդունելով իր կողմից ներկայացված Իրավական ակտերը՝ խնդրել է իրեն ազատել հայտարարատու լինելու պարտավորությունից:

1.7 Վերոնշյալով պայմանավորված՝ Հանձնաժողովի կողմից սույն վարույթի շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել վարույթի մասնակցի կողմից ներկայացված՝ քննարկվող պաշտոնում նշանակման և պաշտոնից ազատման վերաբերյալ փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին թիվ 737-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված Հավելված 1-ով սահմանված պետական իշխանության **մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող** անձանց շրջանակը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քննարկվող խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողի պաշտոնը (Որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 80-րդ կետ) ներառված է պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող անձանց ցանկում:

1.8 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Կարեն Ալեքսանի Անդրոյանի բացակայությամբ 2024 թվականի հոկտեմբերի 22-ին՝ ժամը՝ 14:15-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/312/2024 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

2.1 Իրավական ակտերով ներկայացված տվյալների համաձայն՝ Կարեն Անդրոյանը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական, կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողի պաշտոնեական պարտականությունները դադարեցրել է 2021 թվականի սեպտեմբերի 29-ին:

2.2 ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Կարեն Ալեքսանի Անդրոյանը «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիր Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն չի ունեցել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 80-րդ կետի համաձայն՝ խորհրդական՝ կառուցվածքային

ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողը հանդիսանում է քաղաքացիական աշխատանք կատարող: Միաժամանակ, «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով:

III. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

3.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են պետական պաշտոն զբաղեցնող անձինք, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարների, 15 000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների ավագանու անդամների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձինք, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի, Երևան համայնքի ավագանու անդամների, քաղաքացիական ծառայության ղեկավար պաշտոնների 1-ին և 2-րդ ենթախմբերի պաշտոն զբաղեցնող անձինք, արտաքին գործերի նախարարության գլխավոր քարտուղարը, զինվորական ծառայության բարձրագույն հրամանատարական և բարձրագույն սպայական պաշտոններ զբաղեցնող անձինք, հարկային, մաքսային ծառայությունների բարձրագույն և գլխավոր պաշտոններ զբաղեցնող անձինք, ոստիկանության, քրեակատարողական, պրոբացիայի և հարկադիր կատարումն ապահովող ծառայությունների գլխավոր պաշտոն զբաղեցնող անձինք, Ազգային ժողովի աշխատակազմում պետական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության բարձրագույն պաշտոններ զբաղեցնող անձինք:

3.2 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:

3.3 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

3.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

3.5 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

3.6 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

3.7 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

3.8 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

3.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

3.10 Օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

3.11 Որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 80-րդ կետի համաձայն՝ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողը հանդիսանում է քաղաքացիական աշխատանք կատարող:

3.12 Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական

ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ քաղաքացիական աշխատանք կատարող անձի և տեխնիկական սպասարկում իրականացնող անձի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ իրավախախտան դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Իրավական ակտերով ներկայացված տվյալների համաձայն՝ Կարեն Անդրոյանը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողի պաշտոնեական պարտականությունները դադարեցրել է 2021 թվականի սեպտեմբերի 29-ին:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

Որոշմամբ հաստատված Հավելված 1-ի 80-րդ կետի համաձայն՝ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողը հանդիսանում է քաղաքացիական աշխատանք կատարող:

Միաժամանակ, Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական աշխատանքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է պայմանագրային հիմունքներով:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող Կարեն Ալեքսանի Անդրոյանն Օրենքով նախատեսված 2021 թվականի պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտավորություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետով, 26-րդ հոդվածով, Օրենսգրքի 247-րդ, 282-րդ հոդվածի 2-րդ կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կարեն Ալեքսանի Անդրոյանինն ազատել վարչական պատասխանատվությունից կարճելով ՎԻՎ/312/2024 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Ալեքսանի Անդրոյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ